ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 6-Ի N 3-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 5-րդ մասին համապատասխան՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի հուլիսի 6-ի «Երևանի քաղաքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկ ստեղծելու, Երևանի քաղաքապետարանի և Երևանի վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմերի կանոնադրությունները, դրանց կառուցվածքն ու հաստիքացուցակը հաստատելու մասին» N 3-Ա որոշման 2-րդ կետի «բ», «գ» և «դ» ենթակետով հաստատված N 2, N 3 և N 4 հավելվածներում կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները՝

1) Որոշման N 2 հավելվածով հաստատված Երևանի վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի օրինակելի կանոնադրության 16-րդ կետի ա) ենթակետում «բաժինների» բառից հետո լրացնել «,ինչպես նաև տեխնիկական սպասարկող անձնակազմի» բառերը:

2) Որոշման N 3 հավելվածում՝

ա. Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի մշակույթի, սպորտի, երիտասարդության հարցերի և տուրիզմի վարչությունը բաժանման ձևով վերակազմակերպել «Մշակույթի և տուրիզմի» վարչության և «Սպորտի և երիտասարդության հարցերի» բաժնի.

բ.ուժը կորցրած ճանաչել «I. Կառուցվածքային ստորաբաժանումներ» գլխի 1-ին կետի 12-րդ ենթակետը և 1 –ին կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 21-րդ, ենթակետով՝

- «21. Մշակույթի և տուրիզմի վարչություն»

գ. «I. Կառուցվածքային ստորաբաժանումներ» գլխի 3-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 5-րդ ենթակետով՝

- «5.Սպորտի և երիտասարդության հարցերի բաժին».

դ.ուժը կորցրած ճանաչել Երևանի 12 վարչական շրջանների ղեկավարների աշխատակազմերի «I. Կառուցվածքային ստորաբաժանումներ» գլուխների 1-ին կետերի 7-րդ ենթակետերը :

3) Որոշման N 4 հավելվածով հաստատված Երևանի քաղաքապետարանի (այդ թվում՝ աշխատակազմի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների) (2009 թվականի) հաստիքային ցուցակում՝

ա. վերնագրից հանել «(2009 թվական)» բառերը.

բ. «Ղեկավարություն» գլուխը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 9-րդ և 10-րդ կետերով՝

9	քաղաքապետի տեղակալների օգնականներ	4	140		560
10	քաղաքապետի առաջին տեղակալի գործավար	1	100		100

իսկ «Ընդամենը» տողի «18» և «4270.0» թվերը համապատասխանաբար փոխարինել «23» և «4930.0» թվերով.

գ. «Կառուցվածքային ստորաբաժանումներ» բաժնի «Անշարժ գույքի կառավարման վարչություն» և «Քարտուղարություն» գլուխների՝ համապատասխանաբար 15-րդ և 12-րդ կետերում «70.0» թվերը փոխարինել «100.0» թվերով.

դ. «Կառուցվածքային ստորաբաժանումներ» բաժնի «Քարտուղարություն» գլխի 2-րդ կետի 3-րդ և 6-րդ սյունակների «2» և «280» թվերը, 15-րդ կետի «1» և «115» թվերը համապատասխանաբար փոխարինել «1» և «140», «2» և «230» թվերով.

ե. «Կառուցվածքային ստորաբաժանումներ» բաժնի «Քարտուղարություն» գլուխը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 2.1 կետով՝

2.1	գլխավոր մասնագետ	1	140	70	210

զ. «Կառուցվածքային ստորաբաժանումներ» բաժնի «Անշարժ գույքի կառավարման վարչություն» գլխի «Ընդամենը» տողի «2485.0» թիվը փոխարինել «2515.0» թվով.

է. «Կառուցվածքային ստորաբաժանումներ» բաժնի «Քարտուղարություն» գլխի «Ընդամենը» տողի «Հավելում» սյունակը լրացնել «70» թվով, իսկ «44», «4925.0» թվերը համապատասխանաբար փոխարինել «45», «5140,0» թվերով.

ը. «Կառուցվածքային ստորաբաժանումներ» բաժնի «Մշակույթի, սպորտի, երիտասարդության հարցերի և տուրիզմի վարչություն» գլուխը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ՝ համաձայն N 1 և N2 հավելվածների.

թ. «ԱՄԲՈՂՋԸ՝ Երևանի քաղաքապետարան» և հաստիքային ցուցակի վերջում «ԱՄԲՈՂՋԸ» տողի «Միավորների քանակը», «Հավելում» և «Ընդամենն ամսական աշխատավարձը» սյունակների «355», «18», «49083.00» և «1939»,«18», «219705.09» թվերը համապատասխանաբար փոխարինել «362», «88», «50083.00» և «1946», «88»,«220705.09» թվերով.

ժ. «Առանձնացված ստորաբաժանումներ» բաժնի «Երևանի վարչական շրջանների ղեկավարների աշխատակազմեր» գլխի 1.1-ից 1.12 կետերում՝

- «Վարչատնտեսական բաժին» բառերը փոխարինել «Տեխնիկական սպասարկման անձնակազմ» բառերով.

- ուժը կորցրած ճանաչել «բաժնի պետ» տողը, 1.3 կետի «առաջին կարգի մասնագետ», 1.6 և 1.7 կետերի «գլխավոր մասնագետ» տողերը.

ժա. «Առանձնացված ստորաբաժանումներ» բաժնի «Երևանի վարչական շրջանների ղեկավարների աշխատակազմեր» գլխի 1.1.-ից 1.12. կետերի «Տեխնիկական սպասարկման անձնակազմ» պարբերության 2-րդ, 3-րդ, 4-րդ, 6-րդ սյունակները լրացնել նոր ենթակետով՝ «տնտեսավար», «1», «175», «175» բառով և թվերով, իսկ 1.3. կետը նաև՝ «մատակարար», «1»,«105»,«105» բառով և թվերով; 1.6 և 1.7 կետերը նաև «մատակարար»,«1»,«120»,«120» բառով և թվերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում համապատասխան փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարար-փոխվարչապետի իրավական ակտն ուժի մեջ մտնելու պահից:

Հավելված 1
Երևանի ավագանու
2010 թվականի ..... –ի
N..... որոշման

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 6-Ի N 3-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

հազ. դրամ

հ.հ.	Հաստիքների անվանումը	Միավորների քանակը	Մեկ միավորի ամսական պաշտոնային դրույքաչափը	Հավելում	Ընդամենը ամսական աշխատավարձը
	Մշակույթի և տուրիզմի վարչություն				
1	վարչության պետ	1	220,0		220,0
	Մշակույթի բաժին				
2	բաժնի պետ	1	175,0		175,0
3	գլխավոր մասնագետ	1	120,0		120,0
4	առաջատար մասնագետ	1	115,0		115,0
5	գործավար	1	70,0		70,0
	Տուրիզմի բաժին				
6	բաժնի պետ	1	175,0		175,0
7	գլխավոր մասնագետ	1	120,0		120,0
8	առաջատար մասնագետ	1	115,0		115,0
	ԸՆԴԱՄԵՆԸ	8			1110,0

Հավելված 2
Երևանի ավագանու
2010 թվականի ..... –ի
N..... որոշման

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 6-Ի N 3-Ա ՈՐՈՇՄԱՆ
ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

հազ. դրամ

հ.հ.	Հաստիքների անվանումը	Միավորների քանակը	Մեկ միավորի ամսական պաշտոնային դրույքաչափը	Հավելում	Ընդամենը ամսական աշխատավարձը
	Սպորտի և երիտասարդության հարցերի բաժին				
1	բաժնի պետ	1	200,0		200,0
2	գլխավոր մասնագետ	1	120,0		120,0
3	առաջին կարգի մասնագետ	1	105,0		105,0
4	գործավար	1	70,0		70,0
	ԸՆԴԱՄԵՆԸ	4			495,0

ՏԵՂԵԿԱՆՔ - ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի հուլիսի 6-ի «Երևանի քաղաքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկ ստեղծելու, Երևանի քաղաքապետարանի և Երևանի վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի կանոնադրությունները, դրանց կառուցվածքն ու հաստիքացուցակը հաստատելու մասին» N3-Ա որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Երևանի ավագանու որոշման նախագծի վերաբերյալ:

Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի հուլիսի 6-ի «Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի համայնքային կառավարչական հիմնարկ ստեղծելու, Երևանի քաղաքապետարանի և Երևանի վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմերի կանոնադրությունները, դրանց կառուցվածքն ու հաստիքացուցակը հաստատելու մասին N3-Ա որոշմամբ (այսուհետ՝ որոշում) 2-րդ կետի գ) և դ) ենթակետերով հաստատվել են Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի և Երևանի 12 վարչական շրջանների ղեկավարների աշխատակազմի կառուցվածքը (հավելված N3) և Երևանի քաղաքապետարանի (այդ թվում աշխատակազմի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների) (2009 թվական) հաստիքային ցուցակը (հավելված N4) :

Որոշմամբ հաստատված հավելվածներում փոփոխություններ և լրացումներ կատարելու անհրաժեշտությունը պայմանավորված է ստորև ներկայացվող հանգամանքներով:

- Երևանի 12 վարչական շրջանների ղեկավարների աշխատակազմերի կառուցվածքում ներառված վարչատնտեսական բաժնի կառավարման մոդելը խիստ տարբերվում է մնացած բաժիններից:

Վարչատնտեսական բաժնի պետը հանդիսանալով համայնքային ծառայության պաշտոն զբաղեցնող անձ, իր անմիջական ենթակայության տակ չունի համայնքային ծառայության պաշտոն զբաղեցնողներ՝ բացառությամբ Երևանի Արաբկիր, Կենտրոն և Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանների ղեկավարների աշխատակազմերում, որոնցում առկա են մեկական համայնքային ծառայության այլ պաշտոններ:

Երևանի վարչական շրջանների ղեկավարների աշխատակազմերի վարչատնտեսական բաժիններում հաստիքացուցակով նախատեսված միավորները զբաղեցնող անձանց միջոցով ապահովվում է վարչական շրջանի ղեկավարի ողջ աշխատակազմի բնականոն գործունեությունը: Տեխնիկական սպասարկում իրականացնող անձինք իրենց աշխատանքային պայմանագրային պարտավորությունները ՀՀ օրենսդրության համաձայն օժտված են իրականացնելու աշխատակազմի այլ պաշտոնատար անձանց լիազորությունների կատարման համար և անմիջականորեն ենթակա և հաշվետու են նրանց՝ հետևաբար կրկնակի ենթակայություն այլ պաշտոնատար անձի (տվյալ դեպքում վարչատնտեսական բաժնի պետին) ունենալը արդարացված չէ:

Բացի այդ, Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի բնականոն գործունեությունն ապահովելու համար անհրաժեշտ ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերման գնումների կազմակերպման աշխատանքների գծով պատասխանատու է ճանաչված աշխատակազմի ֆինանսական վարչությունը, որի ներքին կառուցվածքում 2009 թվականի տարեվերջին ստեղծվել է գնումների բաժին՝ գնումների գործընթացը ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան իրականացնելու համար, որի արդյունքում Երևանի 12 վարչական շրջանների ղեկավարների աշխատակազմերի վարչատնտեսական բաժնի պետերին վերապահված բավականին շատ գործառույթներ փոխանցվել են գնումների բաժին:

Վերը նշված հիմնավորումները թույլ են տալիս համայնքային ծառայության թվարկված պաշտոնները դուրս բերել համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկից:

- Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի մշակույթի, սպորտի, երիտասարդության հարցերի և տուրիզմի վարչության վերակազմակերպումը լրացուցիչ հնարավորություններ կընձեռի «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով Երևանի քաղաքապետին վերապահված պարտադիր և պատվիրակված լիազորությունները համապատասխան բնագավառներում լիարժեք իրականացնելու համար:
- Հաստիքային ցուցակում նախատեսվում է փոփոխություն կատարել աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության և քարտուղարության վարչատնտեսական բաժնի երկրորդ կարգի մասնագետների աշխատավարձում:

Մեկ միավորի ամսական պաշտոնային դրույքաչափը 70 հազար դրամի փոխարեն 100 հազար դրամ սահմանելով տարբերակվում է գործավարների աշխատավարձը մասնագետների աշխատավարձից, ինչպես նաև կրճատվում է առաջին և երկրորդ կարգի մասնագետների աշխատավարձերի միջև եղած էական տարբերությունները:

- Նախատեսվում է նաև 70 հազար դրամ հավելում սահմանել աշխատակազմի քարտուղարության գլխավոր մասնագետի համայնքային ծառայության պաշտոնի համար, որը զբաղեցնող անձին է վերապահված արխիվային գործի վարման գործառույթների իրականացումը: Հավելում սահմանելու համար հիմք է հանդիսանում «Աշխատանքի վարձատրության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջները, այն է՝ «Առողջության համար վնասակար աշխատանքի կատարման դեպքում աշխատողին վճարվում է հավելում՝ նրա տարիֆային աշխատավաձի (պաշտոնային դրույքաչափի) 50 տոկոսի չափով», ինչպես նաև ՀՀ Կառավարության 11.12.2003թ 1907- Ն որոշմամբ հաստատված h 4 հավելվածը:
- Սույն որոշման նախագծով հաստիքային ցուցակը լրացվում է Երևանի քաղաքապետի տեղակալների օգնականների թվով 4 և քաղաքապետի առաջին տեղակալի գործավարի 1 հաստիքային միավորներով՝ դրանց խիստ անհրաժեշտությունն առաջանալու կապակցությամբ, ինչպես նաև աշխատակազմի քարտուղարության արձանագրային բաժնում առաջատար մասնագետի թվով 1 հաստիքային միավորով՝ բաժնի աշխատանքային գերծանրաբեռնվածությունը թեթևացնելու համար: Բաժինը վերջին տարիներին աշխատանքներն իրականացնում է գերծանրաբեռնված ռեժիմով: Նշվածը հիմնավորվում է Երևանի քաղաքապետի կողմից ընդունված որոշումների և կարգադրությունների դինամիկ աճով: Եթե 2008 թվականին ընդունվել է 6500 որոշում,ապա 2009 թվականին այն կազմել է 10 հազարից ավելի:

Թվով 7 հաստիքային միավորների ավելացումով ,ամսական աշխատավարձի ֆոնդը ավելանում է 845 հազ. դրամով (բոլոր փոփոխություններով՝ 1000 հազ.դրամով):

Ելնելով վերո հիշյալից և ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 70-րդ հոդվածով առաջարկվում է Երևանի ավագանու 06.07.2009թ 3-Ա որոշման մեջ կատարել համապատասխան փոփոխություններ և լրացումներ:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ **Գ. ԲԵԳԼԱՐՅԱՆ**

ՏԵՂԵԿԱՆՔ

Երևանի քաղաքապետարանի կառուցվածքի փոփոխությունների վերաբերյալ

հ/հ	Վարչակազմակերպական կառուցվածքի անվանումը	Ավելացում	Կրճատում
	Կառուցվածքային ստորաբաժամում		
1	Մշակույթի, սպորտի, երիտասարդության հարցերի և տուրիզմի վարչություն		Մշակույթի, սպորտի, երիտասարդության հարցերի և տուրիզմի վարչություն
2	Մշակույթի և տուրիզմի վարչություն	Մշակույթի և տուրիզմի վարչություն	
3	Սպորտի և երիտասարդության հարցերի բաժին	Սպորտի և երիտասարդության հարցերի բաժին	
	Առանձնացված ստորաբաժանում		
4	Վարչատնտեսական բաժին		Վարչատնտեսական բաժին
5	Տեխնիկական սպասարկման աշխատակազմ	Տեխնիկական սպասարկման աշխատակազմ	

ՏԵՂԵԿԱՆՔ

Երևանի քաղաքապետարանի աշխատակիցների ամսական աշխատավարձի փոփոխությունների վերաբերյալ

հազ.դրամ

ՀՀ	Հաստիքների անվանում	հաստատված ամսական աշխատավարձի ֆոնդ	նախատեսվող ամսական աշխատավարձի ֆոնդ	Տարբերություն	%
	Անշարժ գույքի կառավարման վարչություն				
1	երկրորդ կարգի մասնագետ	70,0	100,0	30,0	42,9
	Քարտուղարություն				
1	երկրորդ կարգի մասնագետ	70,0	100,0	30,0	42,9
2	գլխավոր մասնագետ	140,0	210,0	70,0	50,0
	Սպորտի և երիտասարդության հարցերի բաժին				
1	բաժնի պետ	175,0	200,0	25,0	14,3
	ԸՆԴԱՄԵՆԸ	**455,0**	**610,0**	**155,0**	**34,1**

	Երևանի քաղաքապետարանի հաստիքային միավորների փոփոխությունների վերաբերյալ										
											հազ.դրամ
հ/հ	Հաստիքների անվանումը	Բաժնի անվանումը	Ավելացում				Կրճատում			Ընդամենն ավելացում /+/ կրճատում /-/	
			միավոր	գումար	հավելում	ընդամենը գումար	միավոր	գումար	ընդամենը գումար	միավոր	գումար
Երևանի քաղաքապետարան											
1	Քաղաքապետի տեղակալի օգնականներ	Ղեկավարություն	4	140,0		560,0			0,0	4	560,0
2	Քաղաքապետի առաջին տեղակալի գործավար	Ղեկավարություն	1	100,0		100,0			0,0	1	100,0
	ԸՆԴԱՄԵՆԸ		**5**			**660**				**5**	**660**
Քարտուղարություն											
1	Առաջատար մասնագետ		1	115,0		115,0			0,0	1	115,0
	ԸՆԴԱՄԵՆԸ		**1**			**115,0**	**0**		**0,0**	**1**	**115,0**
Սպորտի և երիտասարդության հարցերի բաժին											
1	գործավար		1	70,0		70,0			0,0	1	70,0
	ԸՆԴԱՄԵՆԸ		**1**	**70**		**70,0**	**0**		**0,0**	**1**	**70**
	ԱՄԲՈՂՋԸ		**7**			**845,0**	**0**		**0,0**	**7**	**845,0**
											1000